8. Թոյլ տալ, որ եղուիտ աստուածաբաններ դասաւանդեն Էջմիածնի հոգեւոր դպրանոցում, իսկ թագաւորը իր վրայ է վերցնում նրանց ծախսը:

9. Սրբագրել աղանդաւոր մասերից եկեղեցական գրքերը: Թագաւորը յանձն է առնում սրբագրուած գրքերը տպել իր հաշուով Մարիամպոլի վարժարանին կից հիմնուելիք տպարանում եւ ձրի տարածել Հայաստանում:

10. Հաղորդել Լեհաստանի թագաւորին եւ Հռովմի պապին, ամէն անգամ, նոր կաթուղիկոսի ընտրութիւնը:

11. Մինչեւ վերոյիշեալի իրագործումը, լեհական արքունիքում պահել առանձին դեսպան:

12. Անմիջապէս վերադարձնել լեհական դեսպանին, Պետրոսովիչին, պատասխանելով արուած առաջարկներին:

Հաղիւ էր Պետրոսովիչը մեկնել Լեհաստանից, երբ Եան Սոբեսկին վախճանուեց:

Բայց Եան Սոբեսկիի մահից յետոյ էլ հայկական թագաւորութեան վերականգնումը չկորցրեց իր շահեկանութիւնը Արեւմտեան Եւրոպայի համար: Ցայտնի չէ, իրենց թէ ուրի՞շ մէկին նկատի ունէր Եան Սոբեսկին, երբ իր ծրագրի կէտերից մէկով հայերին առաջարկում էր Հայաստանի թագաւոր ընտրել Եւրոպայի քրիստոնեայ թագաւորներից մէկին:

Սակայն հայկական գահի թեկնածուն գտնուեց շատ շուտով: Եան Սոբեսկիի մահից ուղիղ երկու տարի անցած, նման մի ծրագրով հրապարակ ելաւ Հռենոսեան պալատին եւ Եղեկտոր*), Բաւարիայի իշխան Եոհան Վիլհելմը, որ իր թեկնածութիւնը գրեց հայկական գահի համար**):

*) Սրբազան Հռովմէական Կայսրութեան (Աւստրիայի) կայսեր ընտրութեան (electio) իրաւունքը պատականում էր կայսրութեան սահմանների մէջ մնող մեծաքանակ իշխանութիւններից միայն 7-ին (յետագային 10-ին):

**) Heigel, Ueber den Plan des Kurfursten Johann Wilhelm von der Pfalz die armenische Konigskrone zu gewinnen (1698-1705), Munchen, 1894.

Եոհան Վիլհելմը, որ աղգակցական կապերով կապուած էր Լէոպոլդ կայսեր եւ Լեհաստանի թագաւոր Ստանիսլաւ Աւգուստի հետ, շատ հեշտութեամբ ստացաւ աջակցութիւնը Հռովմի, որը վաղուց արդէն ուշադրութիւն էր դարձրել հայ ժողովրդի ճակատագրի վրայ եւ ձգտում էր հայերին կաթոլիկական հաւատի դարձնել: Շատ հեշտութեամբ գտնուեց եւ «համապատասխան» հայը, որը միացնում էր իր մէջ արտակարգ նախաձեռնութիւն: Այդ հայը, որ փոխարինեց Եան Սոբեսկիի գործակից կոմս Կոստանդին Սիւրիացուն, Հայոց պատմութեան քաջածանօթ Իսրայէլ Օրին էր, Պռոչեան մելիքների տնից:

1678 թ. Օրին, իր հօր Իսրայէլի հետ, մտնում էր Յակոբ կաթուղիկոսի պատուիրակութեան մէջ, որը գնում էր Եւրոպա՝ խնդրելու համար պապին եւ քրիստոնեայ թագաւորներին, որ նրանք աղատեն հայերին պարսկական լծից: Յակոբ կաթուղիկոսի մահից յետոյ պատուիրակութիւնը վերադարձաւ Հայաստան, իսկ Օրին մնաց Եւրոպայում: Նա ապրեց Իտալիայում, Ֆրանսիայում եւ, վերջապէս, հասաւ Բաւարիայի իշխանի մօտ: Կատարեց զինուորական ու քաղաքացիական պաշտօններ, զբաղուեց առեւտրով՝ ծախելով դոհարեղէն, գորգեր, մետաքս ու ձի, որոնք այն ժամանակուայ Եւրոպայում գտնուող հայերի վաճառքի ընդհանուր առարկան էին կազմում:

Տֆալցի Պալատինը նրան դարձրեց իր գործակիցը, եւ Օրին երեւան բերեց արտակարգ եռանդ ու ձեռներէցութիւն եւ շատ շուտով հայկական հարցին կուսակից դարձրեց ու գրաւեց Ռուսաստանի ցար Պետրոս Մեծին եւս: Ուշադրաւ է, որ իր հովանաւորներից իւրաքանչիւրի առջեւ Օրին պատկերացնում էր միայն նրան հետաքրքրող հեռանկարներ. Հռովմի պապին խոստանում էր կաթոլիկութիւն ընդունել տալ հայերին, Բաւարիայի իշխանին՝ հայկական թագը, իսկ Պետրոս Մեծին՝ Անդրկովկասի եւ Կասպից Ծովի նուաճումը:

Այս պատմական դէպքի հետաքրքրական մանրամասնութիւնները արժանի են առանձին ուսումնասիրութեան եւ դուրս են ներկայ գրքուածքի սահմաններից: Ցիշենք միայն, որ